ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

Թեմա՝ «Թումանյանի ստեղծագործությունները՝ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման միջոց»



Առարկա՝ «Գրականություն»

Հեղինակ՝ Անահիտ Մարոյան

Ուսումնական հաստատություն՝ «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- **Հետազոտության թեմայի արդիականությունը:**

Հաշվի առնելով մեր գրականության վեհությունն ու նրա տված կյանքի դասերի անփոխարինելիությունը մատաղ սերնդի արժեքային համակարգի ձևավորման համար՝ պետք է նշել, որ մեծն բանաստեղծ Հովհ. Թումանյանի ողջ ստեղծագործական ժառանգությունը մեծագույն դպրոց է սովորողների մեջ բարձր արժեքներ ձևավորելու տեսանկյունից: Գրողի, հասարակական ու ազգային գործչի վաստակը կարող է սովորողների համար դառնալ հայրենասիրության, մարդասիրության, բարոյական բարձր արժեքների ձևավորման ակունք, ուստի և թումանյանական գաղափարախոսության կարևորության շեշտադրմամբ էլ պայմանավորված է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել Մեծն Թումանյանի գրական ժառանգության դերը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործընթացում, ընդգծել այդ ստեղծագործությունների օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության խնդիրը

- Ուսումնասիրել Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների դերը մատաղ սերնդի կրթության, դաստիարակության և վերջիններիս արժեհամակարգի ձևավորման գործընթացում:
- Մատնանշել գրականության դասավանդման շրջանակներում, թումանյանական դասերի ազդեցությունը սովորողների բարոյական նկարագրի կերտման հարցում:
- Շեշտադրել մեծն գրողի գրական հայացքների դրական ազդեցությունը սովորողների աշխարհայացքի ձևավորման վրա:

Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

- Սովորողների կարողունակությունների ձևավորման ու գիտելիքների ընդլայնման կողքին դնում ենք նաև վերջիններիս արժեքային համակարգը:
- Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է նաև կրթության ընթացքում ստացած տեղեկատվության միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ:
- Դպրոցի առաջնային գերխնդիրն է ցույց տալ սովորողին լավի, բարու, մարդասիրության, ազնվության ու աշխատասիրության օրինակները: Այս առումով կարևոր է ցանկացած ուսումնական առարկա, որը սովորողին տալիս է իր դրական օրինակն ու ուղղորդումը:
- Սովորողի արժեքային համակարգի հիմնասյուները դրվում են դպրոցում: Դասապրոցեսը, սովորողների միջանձնային շփումները, լայն շրջանակների հետ համագործակցությունը իրենց ազդեցությունն են թողնում սովորողի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ:



Թումանյանի ստեղծագործությունների ազդեցությունը սովորողների արժեհամակարգի զարգացման վրա

- Թումանյանի գրական անգին ժառանգության մեջ առանցքային տեղ են գրավում դպրոցին, ուսուցչին և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերող հարցերը, որոնց մոջ բարձրացված գաղափարներն այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը: Թումանյանի համար աներկբա էր, որ կրթության ու դաստիարակության գործում վճռական դեր է կատարում ուսուցչի դրական օրինակը, ուստի ամենից առաջ ինքը մանկավարժը պետք է օժտված լինի մարդկային արժանապատվությամբ , ունենար խոր ու հաստատուն գիտելիքներ:
- Դեռ վաղ մանկական տարիքից Թումանայանի հեքիաթների օրինակով հայ մայրերն իրենզ զավակների մեջ դաստիարակել են բարձր մարդկանի արժեքներ, ցույց տվել լավի ու վատի, չարի ու բարու սահմանները:

- Հայրենաճանաչության, հայրենասիրության, մարդասիրության, լավի, բարու, պարկեշտի ու ազնվության օրինակներն անսպառ են թումանյանական պոեզիայում: Նրա մաքրամաքուր գրականությունը մեծապես ներգործում է դեռահասության տարիքի սովորողների՝ աշխարհի նկատմամբ ունեցած պատկերացումների վրա:

- Նա հայրենասիրության դաստիարակման առաջնային գործոն է համարում իր ժողովրդի դարավոր պատմության իմացությունը, հայրենաճանաչությունը, որին էլ ծառայեցնում էր իր անմահ գործերից շատերը, ինչպիսիք են՝ «Հայրենիքիս հետ», «Հայոց վիշտը» «Խրճիթում» «Հայոց լեռներում» բանաստեղծությունները:

- Թումանյանին կամքի ուժ տվող կարևոր հոգեբանական-մանկավարժական գործոններից մեկը լավատեսությունն էր: Նրա ստեղծագործությունները սովորողներին ուժ և կամք են տալիս, նրա հերոսներն ուղղորդում են, սովորեցնում, զգուշացնում, մատնացույց անում արատներն ու կյանքի վատ կողմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրության արդյունքում կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կներկայացնենք ստորև.

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից:
- Գրականության ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի, որևէ կերպ չպետք է պարտադրել սովորողին սեփական կարծիքը, հարկավոր է ամեն կերպ խթանել վերջինիս ինքնուրույնությունն ու քննադատական մտածողությունը:
- Հարկավոր է Գեղարվեստական գրականության մեջ առկա դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:

- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորել սովորոցնելով հասկացությունը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք:
- Սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Ուսուցիչը պետք է ամեն կերպ փորձի նպաստել բարձր մարդկային որակներ՝ ո արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն, որոնց հասնելու ճանապարհին, վստահաբար, շատ կօգնի մեծն Թումանյան հայը, գրողը, մարդը, քաղաքացին, հայրենասերը, հումանիստը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ